ՀՏԴ 809.198.1 *Ժամանակակից հայոց լեզու*

ԲԱՅԱՆՈՒՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ.Սարգսյան

Բայանուն գոյականն ունի իրեն յուրահատուկ խոսքիմասային առանձնահատկությունները: Ուշագրավ է գործողության անուն-բայանվանը բնորոշ բայիմաստի խնդիր առնելու առանձնահատկությունը, «որ այս կարգի բառերը գոյականներ են, անվիճելի է,բայց որ սրանք ինչ-որ չափով բայի իմաստ պահած գոյականներ են,նույնպես ակներև է»[1]: Հայտնի է, որ բային բնորոշ են բայիմաստը, սեռը, խնդրառությունը: Բայց ինչո՞վ բացատրել բայանունների բայիմաստով պայմանավորված խնդիրներ ու պարագաներ առնելու առանձնահատկությունը: -Ում ածանցով կազմված բայանունների մեջ գործողության գաղափարը ավելի ցայտուն է, գիտակցվում է գործողության ընթացքայնությունը, ըստ այդմ էլ կարող են փոխակերպվել անորոշ դերբայի: Օրինակ՝

Եվ ամեն մի սխալ շտկելիս, ակամա,
գործում ենք նոր սխալ,
Սխալ է ճգտումը:(ճգտելը) 1,164*
Թե վահանների ծնծղան անծիծաղ,
Թե շնփոթումը /շնփոթելը/ զորապետների,
Խոլ ելևէջը արյան գետերի… 2,24

Զուգահեռ բայանունը չունեցող բայի վերացական անունը նշելիս գործածվում է անորոշ դերբայը: Օրինակ՝

Միայն ընդհանուր հայտարարում են
Ճշտվում-ճշգրտվում տրված թվերը,

Լոկ ճուտ հանելիս
Թռչունի առողջ կամ լակ ձվերը,
Թռչուններին իրենք՝
Երբ սկսվում է նրանց չվելը…1,400

Սա ևս մատնանշում է, որ անորոշ դերբայն ու բայանուն գոյականը որոշ դեպքերում իրենց դերով համարժեք են: Սակայն ոչ բոլոր բայանուն գոյականներն են, որ պարունակում են բայիմաստ, որն էլ պայմանավորում է նրանց խնդրառական հատկանիշը: Սեռը ևս բայի հատկանիշն է, որով պայմանավորված են գործողության անցողականության, ներգործման ու կրման գաղափարները: Սեռի խնդիրներն են ուղիղ կամ կրող և ներգործող խնդիրները:

---

* *Առաջին թիվը Պ.Սևակի երկերի ժողովածուի առաջին կամ երկրորդ հատորյակն է, երկրորդը՝ էջը:*

Բայանուն գոյականներին հատուկ չէ կրող խնդիր առնելու հատկությունը:Սակայն նրանք կարող է ունենալ անուղղակի խնդիրները, որոնք ըստ էության լրացնում են այդ տեղը, ինչպես՝հագուստ մաքրելը, հագուստի մաքրումը,պատ քանդելը, պատի քանդումը,արտ հնձելը,արտի հունձը և այլն:

Բայանուն գոյականին բնորոշ չէ սեռի կարգի ձևաբանական դրսևորումը:

Գոյականն ունի եզակի և հոգնակի թվի հակադրություն: Արդյոք բայանուն գոյականը ևս ունի այդ հակադրությունը, և բոլոր բառերն են,որ դրսևորում են այն: Ամենից շատ դա պետք է որոնել բառիմաստի մեջ՝թանձրացական են,թե վերացական:Արդեն պարզ է, որ գործողության գործիք, արդյունք,գործող անձ ցույց տվող բայանունները թանձրացական են հիմնականում, քանի որ և՛ գործող անձը, և՛ գործողության հետևանքը, արդյունքը նյութականություն ունեն: Հետաքրքրական է մի նկատում.գործողության անուն բայանունները, որոնք, թանձրացականություն չունեն, նշում են գործողության հետևանք, որը նույնպես թանձրացականություն չունի:

Օրինակ՝ <u>կարոտ, գոջում,ափսոսանք</u>

_բայանունները՝ որպես կարոտելու, գոջալու, ափսոսալու հետևանք, կարող են նշել և գործողության անուն, և գործողության հետևանք:

Առավել վերացական են զուտ գործողության անուն բայանունները:

Թանձրացական գոյականները հաշվելի են և ունեն հոգնակի թվի հակադրություն, իսկ վերացական գոյականները /բայանունները/ անհաշվելի են և բնականաբար զուրկ են այդ հակադրությունից:

«Եզակի թվով են գործածվում <u>-ում, -ություն ածանցներով</u> կազմված այն_բայանունները, որոնք վերացական են, ինչպես՝ <u>ծագում, տապալում, ուսում,ատելություն, ճգողություն,լսողություն և այլն:</u> Իսկ <u>-ում</u> և <u>-ություն</u> ածանցներով կազմված գոյականների մի մասը, որը ունի նաև թանձրացական նշանակություն, ազատ գործածվում է հոգնակի թվով, օրինակ՝ շարժումներ, հանդիպումներ, հուզումներ, կառուցումներ, հիշողություններ, ցանկություններ և այլն»:[2]

Սակայն միշտ չէ, որ թանձրացականի և վերացականի հակադրությամբ է որոշվում բայանունի հոգնակիի և եզակիի հակադրություն ստեղծելը:

«Սակայն ժամանակակից հայերենում հոգնակի <u>ը, ները</u> վերջավորությունները կարող են դրվել վերացական անունների վրա կամ իմաստի որոշ կոնկրետացման հետ կապված, կամ շարահյուսական որոշ պայմաններում մի քանի անգամ կրկնվելը կանխելու, այլև արտահայտած հատկանիշի դրսևորման տարաբերությունները ընդգրկելու համար»: [3]

Կազմությամբ բարդ բայանուն գոյականները ստանում են <u>ները</u> հոգնակերտ մասնիկը,քանի որ նրա վերջին բաղադրիչը իր մեջ ներառում է բայիմաստ:Զուտ գործողության անուն բայանունները չունեն եզակիի և հոգնակիի հակադրություն,որովհետև վերացական, նյութականությունից զուրկ անհաշվելի գոյականներ են, ինչպես՝ աճ, այց, գութ, եռ, եփ, էտ, լող,

կանգ, խոտհունձ, կովկիթ, այգեթաղ, ելևէջ և այլն:-Անք ածանցով բայանունները ընդհանրապես անհաշվական են, բայց հոգնակի թիվ կազմում են և ցույց են տալիս գործողության բազմապատիկություն, հաճախակիություն,ինչպես օրհնանք, գնդգնդանք, հոսանք, գգվանք, գովասանք և այլն:

Եթե գործողության անուն-բայանունները արդեն ձեռք են բերել իմաստի թանձրացականացում, ապա պարզ է, որ կունենան հոգնակի թիվ:

Բայանուններին բնորոշ են ի, ու,ան, յան, ա հոլովումները, որոնցից ան, յան, ա հոլովումները ձևաիմաստային են, ու հոլովման պատկանող բայանունները բնութագրվում են ձևային առանձնահատկությամբ, իսկ ի հոլովման պատկանում են շատ բայանուններ, որոնք որևէ հատկությամբ չեն առանձնանում:Ինչպես գիտենք ի-ն ընդհանրական հոլովում է, և գնալով ավելի շատ բառեր են ընդգրկվում այդ հոլովման մեջ: Մի շարք գոյականներ աստիճանաբար թեքվում են դեպի ի հոլովումը, ինչես՝ ջնջում- ջնջումի, ուղղում-ուղղումի, ապրում-ապրումի: Գործողության վերացական իմաստ նշելու դեպքում բայանունը հոլովվում է ան հոլովումով, իսկ նյութական իմաստ արտահայտելու դեպքում՝ ի հոլովումով:Օրինակ՝ ջնջում-ջնջումի/ջնջման,վրիպում-վրիպումի/վրիպման, ներում-ներումի/ներման և այլն:

Միգուցե մեզ էլ այս էր վիճակված.
Դու՝ քո գոջումի գնդանում փակված,
Ես՝ իմ գոջումի արջի ճանկերում,
Բանտարկվածի պես ետ-առաջ քայլել
Քո ծանոթ անվան երկու վանկերում:

Այդ ով իմ գալիքը քո աչքերի խորքում
Եվ քո սերը մորթեց իմ ձեռքերի վրա:
Այդ ով և ինչու է բաց դուռն իմ դեմ փակում
Ու գոջման աղ ցանում իմ վերքերի վրա:1,226

-Ուստ, -ունդ ածանցներով կազմված բայանունները հոլովվում են յան/ի զուգահեռ ձևերով՝ փախուստ-փախստյան/փախուստի, գալուստ-գալստյան/գալուստի, ծնունդ-ծննդյան/ծննդի: մնացած բայանունները հոլովվում են ա ներքին հոլովմամբ:

-Ում ածանցով կազմված բայանունները ենթարկվում են ան արտաքին հոլովման:

Բայանուն գոյականին հատուկ են շարահյուսական այն բոլոր առանձնահատկությունները, որոնք բնորոշ են գոյական անվանը: Սակայն սրանից դուրս բայանուն գոյականը կարող է դրսևորել բային հատուկ խնդրառության հատկանիշը, որը պայմանավորվում է նրա բայիմաստով:

Բայի խնդրառությունը պայմանավորվում է նրա բառային, ձևաբանական առանձնահատկություններով: Արդեն նշվել է, որ բայանուն

գոյականը, պայմանավորված սեռի կարգի բացակայությամբ, կրող խնդիր չի կարող ունենալ: Բացի այդ, բայանուն գոյականը ներգործականությունը և կրավորականությունը արտահայտում է միևնույն ձևով, ինչպես՝ սպասում կարող է մի դեպքում նշանակել սպասել մեկին, մի այլ դեպքում՝ սպասվել մեկի կողմից:Բայանուն գոյականը կարող է ընդունել զանազան հոլովներով լրացումներ՝ նայած թե որ հոլովով լրացում է պահանջում բայանունը:

Գոյականը ամենից շատ լրացումներ ստանում է սեռական հոլովով:

Հետաքրքրական են խնդրային սեռականով կապակցությունները: »Հատկացուցիչն այս դեպքում ցույց է տալիս այն առարկան, որն իր հատկացյալի արտահայտած գործողության խնդիրն է«:[4]

Միևնույն բայանուն գոյականը թանձրացական իմաստով գործածվելիս կդառնա հատկացուցիչ, իսկ վերացական լինելու դեպքում կունենանք կողմնակի ենթակա կամ խնդրի արժեք ունեցող սեռական հոլովով լրացում:Օրինակ՝ գրավորի ջնջում և մի ողջ ազգի ջնջում:

Եթե բայանուն գոյականը անորոշ դերբայով փոխակերպելիս իմաստային փոփոխություն չի առաջանում, ուրեմն նրանց շարահյուսական դերը նույնն է, Օրինակ՝

Իրենց յոթնաղի տավիղը ձեռքին՝
Նրանք են երգել ծնունդն/ծնվելն/ այս աստծո…2,13

Հետո խուժում էր, մեղեդուն խեղդում
Վայրի աղմուկը վայրի քուշանաց,
Դոփ ու տրոփը բարբարոս հոնաց…2,229

Քուշանաց աղմկելը, հոնաց դոփելն ու տրոփելը բառակապակցություններում անորոշ դերբայն ու բայանունը փոխարինում են միմյանց առանց իմաստի խախտման: Քանի որ ներգործական բայերիբայերի հետ կապվող բայանունները իրենց մեջ ներառնում են նաև կրավորականության իմաստ, ապա միայն խոսքային իրադրությունում կարելի է որոշել՝ լրացումը կողմնակի ենթակա է, թե խնդիր:

Գործողության անուն-բայանվան բացառական հոլովով լրացումները տարբերվում են անվան լրացում հանդես եկող բացառականից:Բայանուն գոյականի բացառականով լրացումը կատարում է կողմնակի խնդիրների և պարագաների շարահյուսական պաշտոն: Սովորաբար բացառական հոլովով դրվում է անջատման անուղղակի խնդիրը:Դրանով էլ պայմանավորված՝ ավելի շատ բացառականով կողմնակի խնդիր են պահանջում այն բայանունները, որոնց իմաստները հաղորդակից են անջատման խնդիր պահանջող բայերին, ինչպես՝ հեռանալ, անջատվել, բաժանվել և այլն:

Գործողության անուն-բայանունը կարող է ունենալ գործիական հոլովով տեղի, ժամանակի, չափի, միասնության պարագաներ, ինչպես՝ վազքը փողոցով, մեկնումը գիշերով, տարածումը մեծ չափերով, մեկնումը ընտանիքով և այլն:

Ներգոյական հոլովը հիմնականում կատարում է տեղի պարագայի շարահյուսական պաշտոն: Ներգոյական հոլովով կարող են դրվել նաև ժամանակի պարագան ու սահմանափակման խնդիրը:

Բայանուն գոյականի ներգոյականով խնդրառությունը մոտ է բայական խնդրառությանը: Ներգոյականով պարագաներ կպահանջեն համապատասխան բայերի հետ իմաստային ընդհանրություն ունեցող բայանունները:Գործողության անուն-բայանունը կարող է ունենալ նաև կողմնակի ժամանակային չափի պարագա,օրինակ՝ նվաճումների ցուցադրումը մի շաբաթում, պլանների կատարումը չորս տարում: Կարող է դրվել սահմանափակման անուղղակի խնդիրը, օրինակ՝ ջանքերի միավորումը, խաղաղության ամրապնդման համար մղվող պայքարում«:

Գործողության անուն-բայանվանը հատուկ են նաև կապերով ու կապի խնդիրներով լրացումներ , օրինակ՝

Ու հիշում են իմոնք
Եվ կհիշեն անվերջ իրենց նվաղումը
Մազերիդ մեջ…1,405

Եվ հնարավոր այն հարությունը,
Որ ավարտվում է լոկ…համաբարձումով
Ոչ թե մարդկանց մեջ վերադարձումով…1,405

Բայանուն գոյականը կարող է ունենալ նաև մակբայներով լրացումներ, ինչպես՝ տեղից տեղ տեղափոխումը, երկրից երկիր թափառումը, նախսօրոք կանխումը, ուշիուշիով հետազոտումը, աստիճանաբար հաղթահարումը և այլն:

Այսպիսով՝բայանուն գոյականներն ու անորոշ դերբայն ունեն նմանություններ ու տարբերություններ: Բայանուն գոյականին հատուկ են գոյական անվանը բնորոշ շարահյուսական կիրառություններ, բայց կարող է դրսևորել նաև բային հատուկ խնդրառություն, որը պայմանավորվում է նրա բայիմաստով: Բայանուն գոյականը չունի բայի սեռի ձևաբանական կարգ և սեռի խնդիրներ չի կարող ստանալ:

Ծանոթագրություններ

1. Մաքսուդյան Լ.,Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում,Երևան, 1984,էջ 53:
2. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր,Ա,Երևան,1970, էջ 135:
3. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան,1960, էջ 150:
4. Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975,էջ 52:

Морфологические и синтаксические особенности глагольных имен

В.Саргсян

Резюме

Глагольные имена и неопределенная форма глагола имеют сходства и различия.

Глагольному имени свойственно синтаксическое применение, но может также проявляться в управлении глаголом, что обусловлено его глагольным значением.

Глагольные имена не имеют морфологической категории залога глагола, и не может образовать дополнения залога.

Morphological and Syntactical Peculiarities of Verbals.

V.Sargsyan

Summary

The verbals and infinitive have some similarities and differences. Verbals have syntactical use, but also can reveal the verb, which caused by its verb meaning. The verbals don’t have morphological category of verb voice and can’t make voice object.